

թիւն և ոյժ լաւ լինելու: Ով իր կեանքով սրբում է մեզքը,
կարող է և իր սիրով փրկել մեզաւորին:

(Christliche Welt, 1902. Քարգմ. Յ. սկ.)



ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

Գլուխ Բ.

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԵՒ ԲԱՐԵՆՈՐՈԳՉԱԿԱՆ ԳՊՐՈՅՆԵՐ

1635—1655.

Մովսէս կոթուղիկոսը մահուան մահճում, զիջանկ-
ւով իր շուրջը հաւաքուած միաբանների և բազմաթիւ այլ
վարդապետների թախանձանքին, յայանում է իր ցանկու-
թիւնը՝ ընտրել իրեն յաջորդ Փիլիպպոս եպիսկոպոս Հաղբա-
կեղուն: Մեծ հայրապետի այս ցանկութիւնը զլուխ է գա-
լիս մի տարի յետոյ. հայ ազգի հեռաւոր անդամները, յար-
պելով իրենց սիրելի հայրապետի կամքը, թղթերով ընտրում
են Փիլիպպոսին, որ և օծուում է 1633 թ. յունուար 13-ին:

Փիլիպպոսը Հաղբակ գաւառի Էրնկան գիւղից էր. 14
տարեկան հասակում գնում է Մեծ-անապատ, բայց այս-
տեղ նորան չեն ընդունում փոքր լինելուն պատճառով. 8
ամիս նա փոնքից դուրս է մնում, մինչև որ Մովսէս վար-
դապետը արեւմուտքից գալով՝ Սարգիս եպիսկոպոսի յանձ-
նարարութեամբ վերցնում է իւր մօտ իբր աշակերտ: Ապա
№ 1488 Յայմաւուրքի յիշատակարանի համաձայն, եւմուս
իներքոյ ծանր կրօնից և կայեալ ի ճգունս մինչև յարունս
հասակի և ի տիս երխասարդութեանս և այսուհետեւ բնա-
բարեալ ի վարժապետին իւրմէ ի Մովսիսէ մեծէ, ասնու

զիարդ քահանայութեան և վարդապետութեան... Յետ փոխման սորին (Մովսիսի) նստուցին յաթոռ հայրապետութեան երկրահատան վկայութեամբ զհայր մեր զտէր Փիլիպպոս, ի թուին ՌՁԲ»։ Այս անգեկութիւններէ վերայ այն պէտք է աւելացնել, որ Փիլիպպոս ուղարկուել է արեւմտեան հայերի մէջ իբր նուիրակ և իւր սուրբ վարքով և գեղեցիկ քարոզներով մեծ համբաւ է ձեռք բերել. դորա սպացոյց Պաւրիժեցու և Չաքարիա պատմիչի մէջ բերած բաղմամբիւ հրաշքները, որոնք Փիլիպպոսի ձեռքով կատարուած են համարուում ։

Փիլիպպոսը ուրեմն բարենորոգիչ գպրոցից դուրս եկած հեղինակաւոր մի անձնաւորութիւն էր. հայրապետական աթոռը նստելով պիտի շարունակէր իւր մեծ նախորդի և իւր մեծ վարժապետի սկսած գործը, և հանդամանքներն ևս աննպաստ չէին ։

Պարսկական դաշի վերայ բարձրացել էր շահ Ահմէտին ինչպէս յիշեցինք՝ խելօք և հանդարտաբարոյ մի մարդ, որը հեռուում էր իւր հօր քաղաքականութեան, այսինքն, առաջ քաշելով հայ տարրը՝ սորա ձեռքով երկրի վաճառականութիւնը արհեստը ծաղկեցնել էր ուղում ։ Այս խոհում քաղաքականութիւնն էր պատճառը, որ Նոր—Չուղան քանի գրնաց աւելի փարթամացաւ, նոյնպէս և ուրիշ անգիի հայերը։ Նոսի այս օրինակին հեռուում էին և խաները. Արեւանի Ափրզունէ խանի անդ անցել էր նորա օրդին Քահմազ-դուլի խանը, մի շատ հայտնէր մարդ և արդարագորով իշխան։ Հայերը, այս ընդհանուր ազգհոյ գրութիւնից օգտուելով՝ եկեղեցական վերանորոգութիւնը բռնն ոգևորութեամբ առաջ էին մղում ։

Փիլիպպոսին մտում էր ժողովրդի և հոգևորականութեան ոգևորութիւնը գործ զարնել. այդպէս էլ լինում է ։ № 1488 յայտնուուրքի յիշատակարանը վկայում է. «Ալիք կաթողիկոսութեան իւրոյ (Փիլիպպոսի) զօրացաւ սա հանգիտի կրօնիք և ամենալայելուչ քաղաքավարութեամբ, ելից զաշխարհ ուղիղ կարգօք և ընդարձակեաց շարքս և դասատունս, և ժողովեալ յոլով մանկունս սայ ընթերցումն

առաւելածային բանից՝ յորոց ժամանեալ յարբունս հասակի
 և ուսման՝ պարզեւէ արժանաւորաց իշխանութիւնս, շնորհս
 և փճակոս որք արձակեցան ի բազում տեղիս և տակաւին
 ևս պիտեն արձակել: Այս վկայութեան մէջ շեշտուած է,
 որ Փիլիպպոս կաթողիկոսի ժամանակը ընդարձակուում են
 դպրոցներ և կրթուած հոգևորականները բազմանում և այդ
 տեղեկութիւնը պատմական իրողութեան բոլորովին համապա-
 տասխան է:

Սորա ժամանակ Սիւնեաց անապատը իւր դործունէու-
 թիւնը շարունակում էր. այստեղ մուսք էր դործել այսպէս
 կոչուած արտաքին գիտութիւնս, այսինքն Արիստոտելի և
 Պորփիւրի մի քանի փիլիսոփայական դրուածների ծանօթու-
 թիւնս միացած քերականական տարրական գիտելիքների հետ:
 Այս գիտութիւնը մուտ գործեց այնտեղ Բաղէշի Ամբուլու-
 վանքի Բարսեղ վարդապետի ներսէս Բեղլու կոչուած աշա-
 կերտի ձեռքով: Ինքը Բարսեղ վարդապետը, որի գաւազանը
 Տաթևացուց էր գալիս տաժանեկի և բազմամեաց աշխա-
 տանքից յետոյ միայն կարողացել էր իր վանքի ձեռագիրներով
 ուսումնասիրել Ասհմանաց և Պորփիւրի Պարսպմանց գիրքը:
 Բարսեղի աշակերտներից միայն ներսէսը կարողացաւ հաս-
 կանալ և սովորել իւր ուսուցչի գառ տուածը: Սա ինչպէս
 առաջ յիշել ենք, գնաց երկու տարու չափ մնաց Սիւնեաց
 անապատում և գառ տուեց բոլորին: Այստեղ էլ միայն Մել-
 քիսէթ Ա. ժանեցին կորոզացաւ հետեւել իւր ուսուցչին որը
 վերջնելով իւր ընդունակ աշակերտին՝ Այս տարու, ապա
 մի առ ժամանակ մնալուց յետոյ եկաւ Էջմիածինս և Մով-
 սիսի վերջին տարիներում ու Փիլիպպոսի ժամանակ դասա-
 խառում էր Էջմիածնում: Այստեղ չմտանանք յիշել, որ
 Փլիլիպպոսը անյարմար համարելով Էջմիածնի դպրոցը Յով-
 հաննախանքում թողնել փոխում է Էջմիածինս վանքի ա-
 բելեղեան կողմի շինութիւններից մէկի մէջ տեղաւորում, և
 Մելքիսէթին այս դպրոցի ուսուցիչ կարգում: Սա ի թիւս
 այլոց ուսուցանում էր նաև այն նշանաւոր վարդապետնե-
 րին, որոնք Ահաատան իբր նուիրակ էին գնացել և կաթողիկ
 պատերններից ծաղրուել էին նորա համար, որ չէին իմացել

Թէ «վարեմ» բառը անուն է, թէ բայ: Խօսքս Խաչատուր Կե-
սարացու և իւրայինների մասին է:

Այսպիսով Հարանց անապատի և Ամրատու վանքի դրոյ-
րոյնների աշակերտը դառնում է ուսուցիչ Եջմիածնում և
ունենեում է Խաչատուր Կեսարացու և մանաւանդ Սիմէոն
Զուգայեցու նման աշակերտներ: Աւրեմն ինչպէս որ արեւ-
մասեան և արեւելեան այսինքն Վանայ ծովի շրջակայքում
ճաղկոզ վանքերը և Սիւնեաց անապատը միացեալ դժով տուին
Եջմիածնին Մովսիսի նման մի կաթուղիկոս, այնպէս էլ այժմ
նորս միացած մեծ գարկ տուին Եջմիածնի գպրոցին, որը
իւր կողմից ամուլ չմնաց, այլ տուեց հայ եկեղեցուն դիա-
նական վարդապետներ և մանաւանդ առաջ բերաւ նոր
Զուգայի գպրոցը:

Նոր Զուգայի գպրոցի հիմնադիրը վերոյիշեալ Խաչատուր
Կեսարացին է, իսկ այդ գպրոցի մեծ ներկայացուցիչն է Սի-
մէոն Զուգայեցին, որը Վճանեչոն աշակերտելուց յետոյ եր-
կար ժամանակ այս գպրոցին աշակերտեց:

Փիլիսոպոս կաթուղիկոսի ժամանակ ուրեմն ոչ միայն
գպրոցների թիւն է շատանում, այլ նաև աշակերտների
գիտութեան սահմանն է ընդարձակում: Գպրոցի աշակերտ-
ները ժամանակի ամենագիտնական մարդիկ լինելով՝ դուրս
էին գալիս և հոգևորական դառնում, որովհետև ժամանակի
հասկացողութեամբ գիտուն մարդիկ պէտք է վարդապետ դա-
նային: Եւ իրաւ Փիլիսոպոս կաթուղիկոսը նոցա վարդա-
պետական գաւազան սաւոյ՝ մի մի տեղի առաջնորդ կամ վա-
նասայր էր նշանակում: Դաւիթ Բողիշեցին գարմացած
բացահանչում է. «Այլ և զթիւ վարդապետաց ի ժամա-
նակի սորա ո՞ կարէ ընդ գրով արկանել, զի ձեռնադրեաց սա-
աւելի քան զՆ. (400) եպիսկոպոս և վարդապետս որոց ա-
մենեցուն գլուխ և վերահացու Յակոբ Զուգայեցի»: Կաթու-
ղիկոսը Յակոբ Զուգայեցուն յանձնում է Դարաշամբի ս. Ստե-
փաննոսի վանքը, որը նա հիմքից քանդելով հոյակապ կերպով
վերաշինում է, իւր բոլոր պարազաններով: Մովսիսի աշակերտ
Ասայի վարդապետին ևս եպիսկոպոս ձեռնադրում ու Երնջակի
ս. Կարապետ վանքի առաջնորդ է կարգում, որ այնպէս

այդ վանքը նորոգում է: Երևուում են նաև Մոյնին, Յոզ-
 ֆանախանքը, Արատգի Թադէոս առաքելոյ և այլ բազմաթիւ
 վանքեր և եկեղեցիներ, որոնց վերայ երկար կանգ առնելու
 կարիք չկայ. միայն մասնանիշ ենք անում Գալբրիժեցու
 պատմութեան ԽՉ. գլուխը, որպէս զի ընթերցողը կարդալով
 տեսնի և զաղափար կազմէ վերաշինելու և վերանորոգելու
 այն բունն ձրգաման մասին, որ զբաւել էր այդ դարը:

Վերանորոգութիւնը առժամանակ կանգ է առնում
 1635 թուին տեղի ունեցող պատերազմի պատճառով: Այդ
 թուին Սուլթան Մուրատ Գ. ը գալիս է Երևան, 9 օրուայ
 մէջ առնում է և Թահմազ—Ղուլիին գերելով՝ յետ է գառ-
 նում: Գորան հեռեւում է Նահ—Սէֆու արշաւանքը,
 1653 ին: Սա 100000 զօրքով եկաւ պաշարեց Երևանը և
 93 օրում առաւ: Գալբրիժեցու համաձայն այս երկուստեք
 արշաւանքները տակն ու վերայ են անում Արարատեան գաւա-
 սը, մանաւանդ ս. Էջմիածինը: Բայց բարեբախտաբար 1639-ին
 կնքուում է խաղաղութեան դաշն երկու պետութիւնների
 մէջ, որի զօրութեամբ արևելեան Հայաստանը դարձեալ Պար-
 սից ձեռքն էր մնում, իսկ Բաղդատը Օսմանցոց: Այս գաշ-
 նադրութեան զօրութիւնը տեւց 88 տարի, որի ժամանակ
 արևելեան հայերը բաւական ազատ շունչ քաշեցին:

Խաղաղութիւնը վերահաստատուելուց անմիջապէս յե-
 տոյ Փիլիպոս կաթողիկոսը սկսում է քանդածը վերաշի-
 նել և նոր շինութիւններ ևս աւելացնել եղածի վերայ:
 Մայր Աթոռի շատ շէնքեր վլել էին և նա այդտեղից էլ
 սկսեց՝ վանքը նորոգեց: № 894 ձաշոցի յիշատակարանի հա-
 մաձայն «կազմեաց ամրագոյն մածուցմամբ, ընդ նմին և բըր-
 գունս եռակի և զեզերս գոնեաց շուրջանակի»: Երևանց սե-
 դանատուն, արևելեան կողմի խցեր, և «զարևելեան կողման
 ձեռակերտս ծագէ ի ծագ սա շինեաց, եդ և արտաքոյ պա-
 րըսպի սորին շինութիւնս ոմանս զերից յարկաց ձիթաս-
 տանեայց և զասպատանս ի բնակութիւն ձիոց և ջորւոց և
 զայլ մասնաւոր պիտոյից տեղիս, հանդերձ այդեստանօք և
 բուրաստանօք, յուլվակի հոգացմամբ»: Ս. Էջմիածնից յետոյ
 նա մի կողմից նորոգում է Անանիա առաքելալի վանքը Երևա-

նում, որը փլել էր այս պատերազմների ժամանակ, և սպա 1662 թուին Հախիսիմէի և Գայիանէի վանքերը: Այս վերջին երկու վանքերի նորոգութիւնը աւոււմ է 3 տարի շինութեան վերայ հսկում էր Յովհաննէս անոււնով մի արեղայ, որը գտնոււմ է ս. Գայիանէի նշխարները: Երկու վանքերի պատերի վերայ կայ հեռեկալ համառօտ արձանադրութիւնը. «Ի թուին ԱճԻ Քրիստոսի ծառայ Փիլիպոս կաթողիկոս ամենայն Հայոց վերստին նորոգեաց զեկեղեցիս սրբոց Կուսանաց Հախիսիմեանց և Գայիանեանց»:

Փիլիպոսի մեծագործութեանց շարքի մէջ աեղ է ընդնում նորա Էջմիածին ջուր բերելը, որը բազմաթիւ նիւթական զոհողութիւններից յետոյ հազիւ զլուխ է եկել: Ապարանում Գիւզալ—դէրէով մի գետակ հոսում էր գէպի Եիրակ, առանց ազգարնակութեան օգտակար լինելու. ս. հայրապետը այդ գետակի առաջը կտրում է և բերում թափում է Քասախի մէջ. յետոյ շահի հրովարտակով իրաւունք է ստանում 10 ջրաղաց ջուր վերցնել նորանից և առուններով բերել Էջմիածին: Նա այդ ջրերը վանքի արեմտեան կողմով տանում է գէպի Գայիանէի վանքը: Այս ստորերկրեայ ջրանցքներով Մ. Տաճարի յատակին խոնաւութիւն ազդող ջրերը հաւաքում և բերում խառնում է այդ առուին:

Մայր Աթոռի այս արաաքին բարեգարդութեան հետ զուգընթացաբար գնում է և աճելով աճում ներքին բարոյական—կրօնական ոյժը: Մենք արդէն տեսնւք, թէ Փիլիպոս կաթողիկոսի ժամանակ ինչպէս ծաղկում էին զըսրոցները, ինչպէս ս. Էջմիածնի դպրոցը փոխադրուելով Էջմիածին, հայրապետի անմիջական հսկողութեան տակ, աւելի մեծ յաջողութեամբ առաջ է գնում: Այս դպրոցներից դուրս եկած հոգևորականները ոչ միայն զբաւ, այլ և հինց Մայր Աթոռում կազմեցին մի պատկառելի թիւ միաբանների: Դաւթի Նազիրեցին գրեթէ ցնձալով պատմում է. «Աչօք մերօք աեսանեմք ս. Էջմիածին անթիւ վարդապետք և արեղայք խարազնազգեստք, կրօնաւորք աւելի քան 500»: Այս թիւը որքան էլ չափազանցութիւն լինի, այնուամենայնիւ ճիշտ է այն, որ այս ժամանակ զբաղէտ միաբանները

Թիւր մեծ էր, որոնք պարապում էին անգագար ընթերցանութեամբ կամ հին հազուադիւր գրքեր արտագրելով: Բաւական է յիշել, որ 1646 թուից սկսած Առաքել անուէնով մի արեղայ արտագրել է Քերականութիւն, Սահմանաց զիրք, Պորփիւր, Տումար, Մեկնութիւն սաղմոսի, Տրամարանութիւն և այլն: Պէտք է ենթադրել, որ եթէ մեկն այդչափ զիրք է արտագրել, ապա բազմաթիւ գրքեր արտագրուած պէտք է լինին այս ժամանակում: № 894 ճաշոցի յիշատակարանում յիշած է, որ այս ժամանակի գանազան տեղերից հաւաքում էին «զգրեանց բազմութիւնս գանազան մասենից առ ի լրումն հոգևոր և մարմնաւոր ախորժակաց հաւարակաց»: Գրքերի վերայ առանձին հոգս էր քաշում ինքը հայրապետը, սորացուցմամբ և յորդորանքով գրուած է օրինակ № 894 ճաշոցը, այլ և ժամագրքեր, ծիսական—կրօնական գրքեր, որոնք առանձին ջանքերով մանրակրկիտ ծշտութեամբ և նկարներով պատրաստուում էին:

Այս բոլոր գրազմունքների մէջ սուրբ հայրապետը չէր մոռանում, որ Մայր Աթոռից կողոպտել էին մի թանկագին դանձ, Ս. Լուսաւորչի հրաշափառ աջը՝ «Զայն աջն» որ պարծանք էր Հայաստանեայցս և պահապան տանս Թորգանց, այլ և նշանակ հայրապետութեան: Անշուշտ ս. հայրապետը այնպէս էր հասկանում, որ Ս. Աջն ու ս. Էջմիածին, Էջմիածինն ու հայրապետական աթոռը միատեղ պիտի լինին: Ահա թէ ինչու ահագին չարչարանք յանձն առած գնում է Պարսկաստանս Նոր—Զուգաս, ուր Ս. Աջն էր գտնուում: Զուգայեցիք հայրապետին աղաչում են չաանել իրանցից այդ օրբազան մասունքը, նոքա չէին կարող բաժանուել Ս. Աջից, որովհետեւ հաւատում էին, որ նա նոցա վերկում և հովանաւորում է այդ օտար աշխարհում: Նոքա չլսելով հայրապետին, որ ասում էր թէ Ս. Աջի իսկական տեղը Ս. Էջմիածինն է և այնտեղ էլ պիտի լինի արգելքներ էին յարուցանում նորա մտադրութիւնը խանգարելու համար. բայց կաթողիկոսը շահի հրովարտակով իրաւունք ստացաւ Աջն Էջմիածին տանել, և երբ ժողովուրդը կրկին ընդդիմացաւ, նա գայրացաւ Խօջայ—Նազարի որդւոց, որոնց ասն մնում էր Աջը, և ամբողջ Զուգա-

յեցւոց վերայ՝ այնպէս որ ժողովուրդը վախեցած նորա արգար զայրոյթից, մանաւանդ թէ չկամենալով աւելի ևս վըտացնել, յանձնուի է նորան, և նա հանդիւսաւոր կերպով բերում է Մայր Աթոռը: «Եւ եղև այս անպատում ուրախութիւն ամենայն Հայոց» և վկայում է Գալբրիժեցին:

Ա. Աջի վերագառնալովը եկեղեցական հանդէսները և արարողութիւնները առանձին շուք են ստանում, մանաւանդ որ ս. հայրապետը ինքը հոգ էր տանում որչափ կարելի է փառաւոր կացուցանել եկեղեցական հանդէսները, որովհետև նա «էր յոյժ տօնասէր, պայծառացուցանող տօնից, զարգարող եկեղեցեաց և պատուիչ տօնից աէրունականաց»: Դորս համար էլ նա «Առատացուցեալ և զարբութեան սպասան և զոսկեղէնս և զարծաթեղէնան և զկերպասեղէնան և նկարակերտս կերտուածոց հանդերձ այլովք վայելչականօք զարդիւք» միւս կողմից ժամակարգութեան հաստատ կարգեր սահմանելով՝ առաջ էր բերում մի հիասքանչ ապաւորութիւն, որը ստացել են ոչ միայն հայ հեռաւոր և մօտաւոր ուխտաւորները, այլ նաև պարսիկ իշխանաւորներն ու խաները:

Ա. յսպէս, Երևանի Քեթիւիկ Մահմէտ խանը խնդրում է հայրապետին Զրօրհնեաց տօնը իւր առջև, Զանգուի վերայ կատարել. իսկ Փիլիպպոս կաթողիկոսը վանքերի առաջնորդների և իւր միաբանների ահադին բաղմութեամբ և մի արտակարգ թափօրով կատարում է Զրօրհնեաց հանդէսը: Ա. յարտակարգ փառահեղութիւնը թուրք խուժանի կրօնամոյութիւնն ու նախանձն է գրգռում, որ շուտացնելով ազմկելով կամենում է թափօրը խանգարել, բայց չի յաջողում, և թուրքերը չարաչար պատժուում են, մինչ հայրապետը խանից պարզեատրուում է:

Մայր Աթոռի ներքին ու արտաքին կեանքի բարգաւաճման հետ աճեց և հայրապետի հեղինակութիւնը թէ հայ և թէ թուրք տարրի վերայ. «Եւ եղև սրբոյ հայրապետիս օր յաւուրս զօրանալ, զի Տէր էր ընդ նմա» գրում է Գալբրիժեցին: Եւ նա գիտէր իւր հեղինակութիւնը դործ գնել, ինչպէս հայ եկեղեցու և Մայր Աթոռի բարեկարգութեան, այնպէս էլ հայ ժողովրդի բարօրութեան համար, որով էջ-

միաձնի և հայրապետութեան հիմքը ժողովրդի սրտի և հոգու մէջ աւելի ամրապնդուում էր: Այսպէս Ղարա—Ղուրաթ անուանով մի բռնաւոր հայկահան, որը ժողովրդին չափաւանջ նեղում էր, ստիպուած էր հայրապետի հեղինակութեան առաջ տեղի տալ: Բայց ոչ միայն մի հարկահան, այլ նոյն իսկ Երևանի խաները տեղիք ունեին վախենալու կաթուղիկոսից, որովհետեւ նորա վկայութիւնը խանի վատութեան մասին կարող էր կործանել նորան: Ընչպէս որ, Քեթիւկ Մահմէտի վերաբերութեամբ պատահեց:

Մայր Աթուռի և Էջմիածնի հայրապետութեան ձեռք բերած այս մեծ հեղինակութեան շնորհիւ մի կողմից նորա թշնամիները պարտուում են, միւս կողմից բարեկամները իրենց «Քրիստոսահիմն և լուսանկար» երկնաքանդակ և ատենասարաս սերուբէլաձեւ և հրեշտակապատ Աթուռի լուսոյ մօր» փառքի նախանձախնդրութեամբ վառուում:

Երկրորդ կարգի անձնաւորութիւններից է Դուլիթ Բաղիշեցին, որը Փիլիպպոսի աշակերտ եղած և նորանից ձեռնադրուած ու Ամրատու առաջնորդ նշանակուած Մեսրոպ Կաթուղիպոսի աշակերտն է, և որը թողել է մի փոքրիկ ժամանակագրութիւն: Սա պատմում է, որ Ախթամարի Փշրուկ կոչուած կաթուղիկոսը կաշառքի ոյժով կամենում էր Վանայ և Բաղէշի կուսակալութիւններէ մէջ ապրող հայերին իւր իշխանութեան տակ առնել, Ախթամարի թեմ դարձնել, բայց «գայն տեսեալ մեծ վարդապետին Մեսրոպոյ մօք» մի տեսանել զարհամարհանս մօր լուսոյ»,—ամբողջ հոգևով զինուում են և շեն թողլ տալիս այդ ոանձգութիւնն անելու: Երկու տարուայ մէջ Ախթամարցիք թուրք զինուորների սուրնի ոյժով փորձում են նոյն բանը եօթն անգամ, բայց ի զուրօ ժողովուրդը լսելով իւր առաջնորդին՝ քշել է տալիս Ախթամարցիներին իւր երկրից:

Բայց միայն Ախթամարը չէր, որ ստիպուած էր տեղի տալ ս. Էջմիածնի ժողովրդի վերայ ունեցած բարոյական հեղինակութեան առաջ: Գանձասարի Աթոռն ևս, որ այս ժամանակներում անկարգ գրութեան մէջ էր, կրում է իւր վերայ ս. Էջմիածնի հայրապետի հեղինակութեան ոյժը: Այդ աթոռ

աի Դրիգոր կաթողիկոսը Փիլիպպոսի ցուցմամբ և հրամանով է ընտրուում: Այդ բաւական չէ. Սաչէնցիք և շրջակայ գաւառի բնակիչները ցանկանալով լքել իրենց Փանձասարի Աթոռը, Միմէոն կաթողիկոսի վկայութեան համաձայն, ինքնաբերաբար խնդրում են Երանի դահակայից, թոյլ տալ իրենց մտնել ս. Էջմիածնի իշխանութեան տակ:

Անշուշտ այս երեւոյթն է պատճառը որ Սօի Միմէոն կաթողիկոսը իւր թղթում, ուղղած Փիլիպպոսին, սորան Աղուանից Աթոռի յափշտակող է անուանում: Միմէոն կաթողիկոսի թուղթը, որը բերուած է Տաշեանի ցուցակի մէջ, կրում է հետեւեալ խորագիրը. «Պաշտպանութիւն իրաւանց սրբոյ աթոռոյս Տանն Արիկիոյ»: Այս թղթից երևում է, որ Փիլիպպոսը նախօրօք նորան մի թուղթ է դրել, որի բովանդակութիւնը թէև չի բերած, բայց որովհետև այդ թղթին քառասուն գրած Միմէոնի թուղթը վերաբերում է երկու աթոռների իրաւասութեան խնդրին, մենք կարող ենք եզրակացնել, որ այդ թուղթն ևս մի այդպիսի բովանդակութիւն պիտի ունենար, և հաւանօրէն Փիլիպպոսը նպատակ է ունեցել Միմէոն կաթողիկոսի սանաձողութեանց առաջն աանել: Միմէոնը ընդհակառակն իւր թղթով աշխատում է սպառնացանել, թէ Սօի Աթոռը ի հնուց անախ ընդհանրական է, թէ այդ աթոռի զօրացման համար է աշխատել ինքը Տաթևային և սորա աշակերտներին երկուսը Սօի աթոռն են նստել, և թէ այժմ էլ նա ունի շատ նշանաւոր վարդապետներ և եպիսկոպոսներ, որ ցրուած են մինչև արևելեան Հայաստան, ի վերջոյ նա զայրացած տաւում է. «Զայլոց վիճակ և զայլոց թեմ յափշտակեցեր՝ թէ՛ զԱղուանս և թէ՛ զայլս»:

Այս դրադրութիւնների վերայ չզիտենք ինչքան է անցնում, երբ Փիլիպպոս կաթողիկոսը, թէև մի այլ պատճառից դրդուած, գնում էր արևմտեան Հայաստան, վերջ տալու երկու աթոռների իրաւասութեան խնդրին:

1651 թուին ս. հայրապետը Յակօբ Զուղայեցուն տեղապահ կարգելով բաղմաթիւ եպիսկոպոսների և վարդապետների ուղեկցութեամբ ձանապարհ էր ընկնում Երուսա-

դէմ դնալու և այնտեղից Կ. Պոլիս: Հայրապետի այս ուղեւորութեան դրդիչ պատճառներ շատ կային: ամենազլխաւորը Կ. Պոլիսի հայերի մէջ տիրող խառն դրութիւնն էր: Այդտեղի հայերը բաժանուել էին երկու կուսակցութեան, մէկը աւելի հին ժամանակներում գաղթած և այնտեղ հաստատած հարուստների կուսակցութիւնն էր, միւսը գաւառներից նոր գաղթածների կամ աղքատ ամբոխներ: Սոցանից իւրաքանչիւրն անխափր, ամէն միջոցի գիմելով՝ կամենում էր իւր մարդկանցից բարձրացնել պատրիարքական աթոռը և դոցա միջոցաւ ձնչել հակառակորդներին: Այս անվերջ խռովութիւններից այլ և Կ. Պոլսում ծագած հրդեհի պատճառով, այնտեղի եկեղեցիների վերայ 40 ոսկի պարտք էր դիպուել: Պարտքը գնալով ամուսն էր կախըր գնալով բորբորում: Այս բոլորին մի դարման տանելու համար շատերն այնտեղից դիմում էին կաթողիկոսին՝ վերջ ապա այդ անտանելի դրութեանը:

Հէնց որ Հայրապետի էջմիածնից դուրս գալու լուրը Կ. Պոլիս հասաւ, հայ իշխանաւորները նորա ապահովութեան համար կառավարութիւնից խնդրեցին և հրաման ստացան, որ պաշտօնական անձինք ուղեկցեն հայրապետին, և վերջինս ազատ համարձակ շրջապսեց արեւմտեան Հայաստանի գլխաւոր քաղաքներն ու գիւղերը: Ճնշուած հայ ազգաբնակիւթեան համար հայրապետի այսպիսի շքեղ փառքով երեւոյլ մի շտեմուած երեոյթ էր, և անպատում ոգևորութեան առիթ, որ բարձրացնում էր ազգային և կրօնական նախանձախնդրութեան ոգին: Ս. հայրապետը ուր որ հանում էր՝ քարոզում, խրատում, օրհնում էր իւր ժողովրդին և ամէն տեղ կարգ վերահաստատում, և այս առաքելութեան համար ստանում էր իւր ժողովրդից առատ նուէրներ: Երուսաղէմ հասնելով՝ նա իւր ժողովրդից ստացած նուէրներով Ս. Յակոբի վանքը սալայատակում է գեղեցիկ և դոյնդոյն քարերով:

Այստեղ օգուտ քաղելով այն հանգամանքից, որ Սիւրիա Սիմէոնի յաջորդ, Ներսէս կաթողիկոսն ևս Երուսաղէմ ուխտ էր եկել, ցանկացաւ որոշ սահմաններ դնել այս երկու

աթոռների իրաւասութեան միջև, որը և դարերի տեւակա-
նութիւն ունեցաւ:

Յայտնի չէ, թէ ինչքան խորհրդածութիւններ են տե-
ղի ունեցել երկու կաթուղիկոսների մէջ և թէ այդտեղ
որչափ դեր է խաղացել Երուսաղէմի Աստուածատուր վար-
դապետը, միայն Դավրիժեցին և միւսները այդ խորհրդածու-
թիւնների արդիւնք 13 կանոնների մի շարք են առաջ բե-
րում: Այդ կանոններից առաջինը և երկրորդը երկու հայ-
րապետական աթոռների միջև որոշ կարգ են սահմանում,
որով իւրաքանչիւր աթոռի իրաւասութիւնը արդէն իսկ սո-
վորոյթի իրաւունքով որոշուած թեմերի մէջ է ամփոփուում,
գորանով երկու աթոռների ազազայ բնդհարման առաջն առ-
նուում էր: Երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ և եօթ-
ներորդ կանոնները եպիսկոպոսների և առաջնորդների իրա-
ւունքն են որոշում: Աւթերորդը վերաբերում է արժանա-
ւորներին միայն վարդապետական դաւաղան տալուն, ինն-
երորդը՝ քահանայի ձեռնադրութեան, տասն և տասն և մէկ
երորդը՝ հասոյթին, տասներկուերորդը՝ ամուսնութեան,
իսկ տասներեքերորդը՝ այրի քահանաների վիճակն էր որո-
շում: Առաջին կանոնից յետոյ իրաւական մեծ նշանակու-
թիւն ունին երրորդը, վեցերորդը և եօթներորդը, որոնց
մասին վերջը խօսք կը լինի:

Այս կարգերը սահմանելուց յետոյ Փիլիպպոսնատում է
նաւ և գնում է Կ. Պոլիս ուր մնում է մի ամբողջ տարի:
Ա. հայրապետը նախ հաշտեցնում է երկու կուսակցութիւն-
ներին միմեանց հետ, ապա առանձին հաւատարմատարներ
կարգելով և իւր հայրապետական հեղինակութիւնը գործ
գնելով մի քանի ամսուայ մէջ յաջողւում է ժողովարա-
րութեամբ պարտքերը վճարել:

Բայց սորանով չվերջացան մեծ հայրապետի գործերը.
նա պիտի սպեղանի գանէր բժշկելու համար մի մեծ վերք,
որը Մելքիսեթէկ կաթուղիոկոսը բացել էր հայ ժողովրդի մի
բարդաւաճ մասի կրծքում:

Նիկոլ Թորոսովիչ իւր գայթակղեցուցիչ վարմունքի հա-
մար տեղական ժողովրդի զղուանքին, Ահհաստան գնացող Քրի-

գոր Աեսարացու բանադրանքին և Մովսէս կաթուղիկոսի յանդիմանութեանն էր արժանացել. ժողովրդի և առաջնորդի մէջ գժտութիւնն ու խռովութիւնները անվերջ էին: Մովսէս կաթուղիկոսն ուղարկուամ է Աեհաստան Խաչատուր Աեսարացուն, որ վերջ տայ խռովութիւններին: Սա Աեհաստան հասնելով, ժողովրդի և նորա դատաւորների կողմը բռնեց և կամեցաւ դատի ենթարկել Նիկոլին. բայց Նիկոլը աւելի խորամանկ և կտրուկ մարդ էր, մինչ Աեսարացին անվճռական և անձարակ: Նիկոլը օգուտ քաղելով սորա անվճռականութիւնից և ժամանակ վաստակելով պապին հնազանդուելու երդումն տուաւ և Յիսուսեանների օգնութեամբ ձեռք ձգեց անդի եկեղեցիները և եկեղեցական գոյքը: Այնպէս որ Խաչատուր վարդապետն անկարող մի բան անելու, դառնում է Եջմիածին և Մովսէս կաթուղիկոսին պատմում եղելութիւնը: Վերջինս ճարահատեալ նամակներ գրեց Աեհաց Ալաղխուլաւ թագաւորին, Իլվովի արքեպիսկոպոսին և պապին և խնդրեց նոցանից վերջ աւել հայերի նեղութիւններին, բայց ի դուր անցաւ այդ բոլորը: Թէպէտե թագաւորը շատ աշխատեց և նոյն իսկ փորձեց անձամբ առնել Նիկոլի ձեռքից եկեղեցիները և աւել հայերին. բայց Նիկոլը հաղորդութեան բաժակը ձեռքին դիմաւորեց թագաւորին և այդ եղութեան կան միջոցով կարողացաւ թագաւորի բարի մտադրութիւնը ապարդիւն դարձնել: Այսպիսով ժողովուրդը մնաց գրկուած եկեղեցիներից, եկեղեցական պաշտամունքներից ու խորհուրդներից: Աեհահայերը ստիպուած 1643-ին նորից պատուիրակ են ուղարկում Փիլիպպոս կաթուղիկոսի մօտ իրենց միջից Պան Գրիգորին, որը հանդիպում է հայրապետին Շօշ քաղաքում, ուր և ժողով է լինում: Ժողովի հեռեանքը լինում է այն, որ Պան Գրիգորը վերագառնում է Աեհաստան կաթուղիկոսի կոնդակը ձեռքին, որով վերջինս իւր հաւատարիմ ժողովուրդն օրհնելուց յետոյ, յոյս է տալիս նոցա, որ շուտով մի բարձրաստիճան եկեղեցական կուղարկէ վերջ աւելու եղած խռովութիւններին*: Յայտնի է այնուհետեւ, որ

* Փիլիպպոսի Ալաղխուլաւ թագաւորին ուղղած թղթի բռնաւիս - Օգոստոս

1647-ին կաթողիկ քարոզիչ Փիլոմալին կաթողիկոսի յանձնարարական թղթերով Լեհաստան էր գնում, որտեղից յետոյ անյու չուովմ առանց գրութիւնը բարեօքել ջանալու:

Խնդիրն այս վիճակի մէջ էր, երբ կաթողիկոսը Ա. Պոլիս հասաւ: Նիկոլը որը սպասել էր եկեղեցիների ամբողջ գոյքը, ճարահասած և նոյն իսկ եզուխոնների խորհրդով Լեհաստանից եկաւ Ա. Պոլիս, որպէս զի մի կերպ կարողանայ բանադրանքից ազատուել և այդպիսով ժողովրդի հետ առժամանակ հաշտուել: Թողովուրդը իւր կողմից ուղարկում է Խաչիօ անուն դատաւորին, որպէս զի Նիկոլի ամբողջ դիմակը պատռէ և միջոց չսայ նորան խաբել կաթողիկոսին: Բայց կաթողիկոսը Նիկոլի գբաւոր խոստումներից խաբուեցաւ. նա պարտաւորուում էր ս. Էջմիածնին հպատակել, չփոփոխել եկեղեցական արարողութիւններից և ոչ մինչ չյիշատակել պապի անունը եկեղեցիներում (միայն ինքը Նիկոլը իրաւունք ստացաւ պատարադի ժամանակ յիշել պապին). այս պայմաններով Նիկոլին արձակեց բանադրանքից և կարգեց կրկին առաջնորդ: Թողովուրդը որ դարձեալ չէր ուզում համակերպուել, կաթողիկոսի ուղարկած ներկայացուցիչ Յովհան փարգասեոսի յորդորներին զիջանելով, հաշտուում է իւր առաջնորդի հետ: Յայանի է սակայն, որ այս հաշտութիւնը մի մեծ սխալ էր, որով Փիլիպպոս կաթողիկոսը հայ եկեղեցու այդ հեռաւոր և ճաղկած համայնքը անպիտակցաբար թողնում էր կաթողիկ քարոզիչների ձեռքին. իսկ նոքա շատ չանցած ուխտադրուած Նիկոլի ձեռնտուութեամբ խորթացնում են աննկատելի կերպով հայ համայնքը Մայր Աթոռից:

1654 ին Ա. Հայրապետը այս կնճառտ խնդրին լաւ վերջ տուած համարելով ժողովրդի առատ նուէրներն առած, «երեւելի եկեղեցական անօթովք և մարմնաւոր կարասիւք» ճոխա-

վանդակութիւնից իմանում ենք, որ այդ քարծրաստիճան եկեղեցականը լինում է Գրեգոր եպիսկոպոսը. նա այդ թուղթը Լեհաստան տանելով թագաւորին պիտի յանձնէր: Ուրեմն ս. հայրապետը իւր խոստումն ու պարտականութիւնը կատարել է:

ցած, այլ և Բրուսացի Անտոն չալարի անունով վաճառականից էջմիածնի զանգակատուն շինելու խոստումն ընդունած, մեծ շքով գտնուում է Մայր Աթոռը և իսկոյն, հակառակ Երևանի Մահմատ—Աուլի խանի արգելքին՝ ձգում է զանգակատան հիմքը: Բայց զեռ կէսը չհասած վախճանուում է 1655-ի մարտի 25-ին, 63 տարեկան հասակում: Նորա մահուան առթիւ հաւաքուած հողեորականների և աշխարհականների բազմութիւնը, ցանկացաւ թաղել նորան զանգակատան տակ. բայց երբ ոչ մի կերպ հնար չեղաւ թոյլտուութիւն ստանալ Երևանի խանից, տարան թաղեցին Հռիփսիմի վանքում, հիսսային խորանի առաջ:

Սորա 22 տարուայ հայրապետութիւնը ամենափառաւոր և արգիւնաւէտ մի շրջան եղաւ թէ Հայ եկեղեցու և Մայր Աթոռի պայծառութեան և թէ հայրապետական հեղինակութեան համար: Դավրիժեցին վերջին անգամ ընդհանուր կերպով նկարագրելով, թէ նա ինչ է արել Մայր Աթոռի համար, ասում է. «Մանաւանդ բարձրագահ Աթոռն Ս. էջմիածին, տո՛վաւ առաւել հոտատեցաւ և փարթամացաւ եկեղեցական անօթով, ոսկւով և արծաթով և մեծագին զգեստիւք և սրատուական գրենօք վարդապետականօք բազմօք, այնպէս և մարմնաւորօք սպասիւք և կահիւք պղնձեղինօք և բրդեղինօք և այլովք այսպիսօք, և հոյլք անբան կենդանեաց՝ ուզոք և ջորիք և ջոկք խաշանց, անդէոց, այլ և արած, այգիս և բուրաստանս», ապա դրուատում է նորան հետևեալ խօսքերով. «Բազմադան կերպիւ հողեոր և մարմնաւոր արդեամբք օգտակար լինէր աշխարհիս, զի իբրև գրեթե ամուր էր նա շուրջ զազգաւն Հայոց ընդդէմ մահմէտականաց, որք ոչ կարէին հարստահարել և զգուել զհայս, վասըն զի ամենայն ներհակք և ախոյեանք, որք իբրև զլեռն հզօր ընդդէմ կային, ամենքեան խորատկեալք ի միջոյ բարձան, եթէ եկեղեցականք, եթէ աշխարհականք և թէ այլասեռ և այլազգի փառաւոր իշխանք: լեալ ամաց վաթսունից արդոյաւոր և մեծաշուք առաջի ամենայն ազանց Հայոց, Հոռոմոց, Աքաց, Սամանցոց, Պարսից, մեծամեծ իշխանաց, նաև թագաւորաց խկ»: Սորան համապատասխան է

Բաղիշեցու վկայութիւնը, որ ասում է. «Սա (Փիլիպպոս) զար-
գարեալ ամենայն առաքինութեամբ, եւ համբաւ սորա ընդ
ամենայն տիեզերս, մինչ զի պատարագս զայր նմա ի պապէն
Հռոմմայ (?), բաղում անգամ ի Կ. Պոլսէ, ի Վրաց թագա-
ւորէ»:

Անհետաքրքրական չէ այստեղ մէջ բերել Ֆրանսացի Դա-
վէռնիէ ճանապարհորդի հատուկոր նկարագրութիւնը ս. Էջ-
միածնում տեսած կեանքի և Մայր Աթոռի թողած տպաւո-
րութեան մասին: 1655-ին, ինչպէս պատմում է Հ. Ալիշա-
նը իւր «Այրարատ»ի մէջ, զայլիս է Էջմիածին Դավէռնիէն:
Նա նկարագրում է «Եկեղեցին, այլև սեղանատուն հանգերձ
գահաւորակաւ կաթուղիկոսին և ձոխ խրախունս ի վերջում
աւուր բարեկենդանի», ապա տեսնւնընդառաջի հանդէսն ու
հրավառութիւնը: Նոյն այդ օրը յարգելի ուղևորը հրաւեր է
ստանում կաթուղիկոսից ներկայ լինելու գոմէշների կուռին:
Հրաւերն ընդունելով նա մի շրջապարսպի վերայից տեսնում
է 8 վիթխարի և ուժեղ գոմէշներ, որոնց կուռեցնելու հա-
մար փակել էին այդ տեղում: Նոցանից երկուսը և ամենակորո-
վիները առաջին ընդհարումից տապաստ ընկան, իսկ միւս-
ները խեղեցան: Գոմէշների կուռի նկարագրութիւնից յետոյ
նա նկարագրում է եկեղեցու ներսը. «Իսկ վասն ձոխութեան
և սպասուց և զարգարանաց եկեղեցւոյն ոչ ուրեք հաւասար
նմին տեսեալ յեկեղեցիս քրիստոնէից, բովանդակ զասն պրճ-
նեալ էր Վենետիկեան ոսկեղիպակաւ և գեաինն ընաիր կա-
պերտիւք, ի վերայ սեղանոյն բազմէր խաչն ի միջի վեցից
ոսկեղէն աշտանակաց (Մեծ պատի օրերն էին), իսկ ի վերայ
աստիճանոց չորք մեծ աշտանակք արծաթիք, հինգ ոսնա-
չափ բարձրութեամբ»: Մայր Աթոռն ուրեմն այնպիսի վա-
ռադարպութիւն ունէր Փիլիպպոս կաթուղիկոսի ժամանակ,
որ այժմ իսկ երազական է թուում: Մենք իրաւունք չու-
նինք այս նկարագրութիւնը բառացի ձշտութեամբ չընդու-
նելու: Բերենք նորանից մի ուրիշ կտոր ևս. «Ի մտանելն
առ կաթուղիկոս ի սենեակ մի փոքր նստեալ էին, ըստ արեւե-
լեան տարապու, առաջի նորա 4 արքեպիսկոպոսք և 9 եպիս-
կոպոսք, և յանկարծ եմուտ ի ներքս ձգնաւոր մի գծծակերք

և ազեղատեսու որոյ և 22 ամաւ յետ չէր բնաւ խօսեցեալ ընդ ումեք, և յայնմ աւուր հրամայեաց նմա կաթուղիկոս, և նա հնազանդեալ առ ժամայն բարբառեցաւ»:

Մ. Խ.



ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՒ ԿԵՐՊԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ.

Արևելագէտներէ միջազգային ժ.Գ. համաժողովում, որ տեղի ունեցաւ Համբուրգում այս սեպտեմբերի 5—10-ին, Հայդելբերգի համալսարանի աստուածաբանութեան պրոֆեսոր հայագէտ Մերքս մի դասախօսութիւն կարդաց՝ «Հին Կտակարանի ազդեցութիւնը տիեզերական պատմութեան զարգացման և կերպաւորութեան վրայ» վերնադրով: Այդ դասախօսութիւնը ժողովականների կողմից արժանացել է մի բոլորովին մասնակի հաւանութեան, ինչպէս յայնուում է Hamburger Nachrichten թերթը, տալով յիշեալ դասախօսութեան բովանդակութիւնը, որից և մենք առնում ենք:

Այն, ինչ որ մենք համաշխարհային պատմութիւն ենք անուանում, այնպիսի կարևոր տեղ է բնուում քաղաքակրթեալ մարդու գիտակցութեան, փիլիսոփայութեան և կրօնի մէջ, որ ինքն ըստ ինքեան հարց է ծագում — ինչպէս է առաջ եկել «համաշխարհային պատմութիւն» գաղափարը: Այս գաղափարն իր պատմութիւնն ունի. նա գլուխ է եկել հելլենականութեան և երբայականութեան ձուլումով: Իւրաքանչիւր պատմութիւն ի բնէ ազգային է: Հերոդոտ արդէն մեծ հետաքրքրութիւն է ցոյց տալիս շրջաբնակ ազգերի պատմութեան համար՝ թէպէտ նա էլ օտարների մասին պատմում է միայն այն, ինչ որ յոյներէ հետ առնչութիւն ունէր: Յետագայ յոյն պատմիչները, ինչպէս օրինակ Քսենոֆոն, Թուկիդիդէս, այս տեսակէտով աւելի յա-